POLICYOBSERVER

NCPPR

2019թ

ՀՀ Պետական գործուղումների մոնիտորինգի արդյունքները

/2019թ հունիս, հուլիս, օգոստոս/

Երևան

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար ՝ Արմենուհի Բուռնազյան

Ուսումնասիրության իրականացնող ՝ Աստղիկ Ավչյան

National Center of Public Policy Research

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

Բովանդակություն

Նախաբան 3
Գնված ավիատոմսերի վերաբերյալ արժեքային մոնիտորինգ 3
Գրաֆիկ 1. Ավիատոմսերի ծախսն ըստ ամիսների, դրամ /2018-2019թ հունիս, հուլիս օգոստոս/ 4
Աղյուսակ 1. 2019թ ամռան ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների 5
Աղյուսակ 2. 2018թ ամռան ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների 6
Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ 7
Գրաֆիկ 2. Պետական գործուղումների կառուցվածքը, 2019թ հունիս-օգոստոս 8
Գրաֆիկ 3. Պետական գործուղումների կառուցվածքը, 2018թ հունիս-օգոստոս 9
Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ 10
Գրաֆիկ 4. Պետական գործուղումների կառուցվածքը, օր / 2019թ հունիս-օգոստոս / 10
Գրաֆիկ 5. Պետական գործուղումների կառուցվածքը, օր / 2018թ հունիս-օգոստոս / 11
Ծառայողական գործուղումների հիմնական ուղղությունները 11
Գրաֆիկ 6. Գործուղումների խոշոր ուղղությունները 2018-2019թ հունիս, հուլիս, օգոստոս 12
Աղյուսակ 3. 2019թ ամառային գործուղումների թոփ 10 ուղղություններ 13
Աղյուսակ 4. 2018թ ամառային գործուղումների թոփ 10 ուղղություններ 13
Ամփոփում 14

Նախաբան

Հայաստանի Հանրապետության պետական գործուղումների օրենսդրական դաշտը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասով: Մոնիտորինգի նպատակն է վերլուծել նոր իշխանությունների պաշտոնավարման վարքագծի փոփոխությունը գործուղումների նկատմամբ: Ուսումնասիրության ժամանակահատված է ընտրված 2018 և 2019 թվականների հունիս, հուլիս և օգոստոս ամիսները: Բոլոր թվային ցուցանիշները վերցված են պաշտոնական աղբյուրներից:

Յուրաքանչյուր տարեսկզբին գործուղումների և շրջագայությունների համար իրականացվում է ծախսերի պլանավորում: Այսպիսով, համաձայն Ֆինանսների նախարարության կողմից հրապարակած տվյալների, 2018 թվականի տարեսկզբին պլանավորվում էր ծառայողական գործուղումների համար պետական բյուջեյից հատկացնել 4.7 միլիարդ դրամ, սակայն տարեվերջին ձևավորվեց 700 միլիոն դրամի խնայողություն և ծախսվեց 4 միլիարդ դրամ: Համաձայն 2019 թվականի տարեսկզբի պլանի, ակնկալվում է ունենալ 4.6 միլիարդ դրամ հատկացումներ ուղղված ծառայողական գործուղումներին, ինչը կկազմի ձեռք բերված ողջ ապրանք-ծառայությունների 2.4%-ը:

Գնված ավիատոմսերի վերաբերյալ արժեքային մոնիտորինգ

Համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հրապարակած տվյալների, պետական գործուղումները բնութագրող թե՛ քանակական և թե՛ արժեքային ցուցանիշները 2019թ ամռանն աճել են, 2018թ ամռան համեմատ: Այսպիսով, սույն թվականի ամռանն ավիատոմսերի ձեռքբերման համար պետական բյուջեյից հատկացվել է 355 միլիոն դրամ, այսինքն՝ նախորդ տարվա նույն ժամանաշրջանի համեմատ 54 միլիոն դրամով ավել և գնվել է 1586 ավիատոմս, նախկին՝ 1252-ի փոխարեն: Սա նշանակում է, որ արժեքային առումով այս տարի ծախսերն ավելացել են 18%-ով կամ 54 միլիոն դրամով (Գրաֆիկ 1.) և քանակային առումով՝ 27%-ով կամ 334 ավիատոմսով:

Գրաֆիկ 1. Ավիատոմսերի ծախսն ըստ ամիսների, դրամ /2018-2019թ հունիս, հուլիս օգոստոս/



Աղյուսակ 1. 2019թ ամռան ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների

Կառույցի անվանումը	ընդհանուր գումարը		ավիատոմսերի քանակը		ավիատոմսի միջին գինը, դրամ
	դրամ	կշիռն ընդամենը ավիատոմսերում, %	հատ	կշիռն ընդամենը ավիատոմսերում, %	
ՊՆ	102,315,632	29	604	38	169,397
ԱԳՆ	32,174,408	9	115	7	279,777
Ոստիկանություն	14,322,619	4	60	4	238,710
ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	13,473,231	4	44	3	306,210
Վարչապետի աշխատակազմ	13,296,264	4	46	3	289,049
Հայաէրոնավիգացիա	10,052,548	3	41	3	245,184
ՊԵԿ	9,664,268	3	57	4	169,549
ՀՀ Նախագահի աշխատակազմ	8,512,159	2	29	2	293,523
Երևանի պետական համալսարան հիմնադրամ	6,820,402	2	35	2	194,869
Հայաստանի Շախմատի Ֆեդերացիա	6,466,927	2	25	2	258,677
Առաջին 10 պետական մարմինների ավիատոմսերի ծախսային հանրագումարը	**217,098,458**	**61**	**1,056**	**67**	**205,586**
Ընդամենը	**355,039,876**	**100**	**1,586**	**100**	**223,859**

Աղյուսակ 1-ում կարող ենք տեսնել, որ գործուղած կառույցների խոշոր տասնյակը (ընդամենը 97 կառույցների ցանկում) վերահսկում է ավիատոմսերի ծախսի 61%-ը կամ 217 միլիոն դրամ: Այսպես օրինակ առաջին դիրքում Պաշտպանության նախարարությունն է: 2019թ ամառային եռամսյակի ընթացքում ՊՆ-ը ձեռք է բերել 604 ավիատոմս, որի համար ծախսվել է 102 միլիոն դրամ գումար, ընդ որում՝ միջինում ավիատոմսի միջին արժեքը կազմել է 169 հազար դրամ: Ի դեպ, ՊՆ ավիատոմսերի ծախսերն ավելացել են 18 միլիոն դրամով: Ի տարբերություն 2018 թվականի ամառային գործուղումների, կառույցների ցանկը գրեթե փոփոխություն չի կրել: Նշենք որոշ նկատելի փոփոխություններ, այսպես օրինակ՝ վարչապետի աշխատակազմը այս տարի ամռանը ձեռք բերելով ավելի շատ ավիատոմսեր նախորդ տարվա համեմատ ծախսել է 2 միլիոն դրամով ավելի քիչ գումար՝ 13 միլիոն դրամ: Նախագահի աշխատակազմը քառապատկել է գնված ավիատոմսերի թե՛ քանակը, թե՛ գումարը՝ 2019թ ամռանը ձեռք բերելով 29 ավիատոմս, ընդամենը 9 միլիոն դրամ արժողությամբ:

Աղյուսակ 2. 2018թ ամռան ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների

Կառույցի անվանումը	ընդհանուր գումարը		ավիատոմսերի քանակը		ավիատոմսի միջին գինը, դրամ
	դրամ	կշիռն ընդամենը ավիատոմսերում, %	հատ	կշիռն ընդամենը ավիատոմսերում, %	
ՊՆ	84,684,118	28	484	39	174,967
ԱԳՆ	33,158,205	11	117	9	283,403
ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	16,978,440	6	49	4	346,499
ՀՀ Վարչապետի աշխատակազմ	15,251,640	5	32	3	476,614
Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	11,902,620	4	54	4	220,419
Ոստիկանություն	10,679,007	4	36	3	296,639
ՊԵԿ	10,344,013	3	42	3	246,286
ԱԻՆ	8,904,203	3	27	2	329,785
ԱՆ	7,437,340	2	25	2	297,494
ՀՀ Սփյուռքի նախարարություն	6,301,889	2	11	1	572,899
Առաջին 10 պետական մարմինների ավիատոմսերի ծախսային հանրագումարը	**205,641,475**	**68**	**877**	**70**	**234,483**
Ընդամենը	**301,161,290**	**100**	**1,252**	**100**	**240,544**

Չնայած այն հանգամանքին, որ այս տարի ամռանն ավիատոմսերի ձեռքբերման համար ավելի մեծ գումար է հատկացվել, մեկ ավիատոմսի միջին գինը նախկինում կազմում էր 241 հազար դրամ, իսկ այս տարի ավելի նվազ՝ 224 հազար դրամ: Սա մասնավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018թ ամռանը ձեռք են բերվել և՛ էկոնոմ (1248 հատ), և՛ բիզնես (4 հատ) կարգի ավիատոմսեր, իսկ 2019թ-ին բացառապես էկոնոմ (1586 հատ) կարգի ավիատոմսեր:

Նկատել ենք ավիատոմսերի գնման գործարքներ, որոնց գնման գինը ընթացիկ շուկայան գնից ավելի բարձր է: Այսպես օրինակ՝

- Առողջապահության նախարարությունը հունիսի 14-ին ձեռք է բերել Երևան-Սինգապուր և հետադարձ ուղղությամբ մեկ ավիատոմս 1.1 միլիոն դրամ արժողությամբ, այն դեպքում երբ շուկայական գինը սկսվում է 600 հազար դրամից,

- Հունիսի 21-ին ՊՆ-ը գնել է 1 ավիատոմս Երևան-Ուլան Բատոր և հետադարձ ուղղությամբ ծախսելով 1 միլիոն դրամ, սակայն շուկայական գինը սկսվում է 500 հազար դրամից,
- Դասական երաժշտության աջակցության ՀԿ-ն գնել է 2 ավիատոմս, Ֆրանսիա-Վիեննա-Երևան և հետադարձ ուղղությամբ, յուրաքանչյուրի գինը՝ 819 հազար դրամ, երբ շուկայական գինը սկսում է 200 հազար դրամից,
- Ոստիկանությունը հուլիսի 17-ին գնել է 2 ավիատոմս Երևան-Վիեննա-Երևան ուղղությամբ, յուրաքանչյուրը 763 հազար դրամ արժողությամբ, այն ժամանակ երբ ավիատոմսերի շուկայում այդ ուղղությանը բնորոշ միջին գինը կազմում էր 300 հազար դրամ, իսկ նվազագույնը՝ 200 հազար դրամ:

2018թ ամռանը նույնպես նկատել ենք նմանատիպ գործարքներ՝

- Նախագահի աշխատակազմի կողմից գնվել են 2 բիզնես կարգի ավիատոմս Երևան-Մոսկվա-Երևան ուղղությամբ, յուրաքանչյուրի արժեքը 919 000 դրամ, երբ նույն ժամանակահատվածում ավիատոմսերի միջին արժեքը կազմում էր 500 000 դրամ:
- Հուլիսի 7-ին Ոստիկանության կողմից ձեռք է բերվել էկոնոմ կարգի 3 ավիատոմս Լիոն-Մոսկվա-Երևան ուղղությամբ՝ յուրաքանչյուրը 575 000 դրամով, մինչդեռ միևնույն ժամանակահատվածում առկա են լինում կրկնակի անգամ մատչելի ավիատոմսեր:

Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ

Համաձայն ՀՀ Էլեկտրոնային Կառավարման տվյալների, 2019 թվականի ամռան ընթացքում պետական գործուղումների ընդհանուր տևողությունը կազմել է 464 օր: 2018 թվականի հունիս-օգոստոս ամիսների համանման ցուցանիշը կազմել էր 331 օր, իսկ 2017 թվականին՝ 258 օր: Կարող ենք տարեց տարի նկատել գործուղումների օրաքանակային աճ:

2019թ ամռան ընթացքում ամենից հաճախ գործուղված անձինք են՝

1. ԱԻՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ **Արսեն Սարոյանը**՝ 17 օր,
2. ԱԻՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության ջոկատի հրամանատար **Համբարձում Վարտոյանը**՝ 13 օր,
3. ԱԻՆ փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության ջոկատի խմբի պետ **Վահե Գևորգյանը**՝ 13 օր,
4. Շրջակա միջավայրի նախարարության նախարարի տեղակալ **Իրինա Ղափլանյանը**՝ 11 օր,
5. Էկոնոմիկայի նախարարության նախարար
6. ի տեղակալ **Տիգրան Գաբրիելյանը**՝ 11 օր:

Վերը նշված աշխատակիցների գործուղումների միասնական կշիռը կազմում է ողջ գործուղումների կառուցվածքում 14 %:

Գրաֆիկ 2. Պետական գործուղումների կառուցվածքը, 2019թ հունիս-օգոստոս



2017թվականի ամռանը մեկ գործուղման միջին տևողությունը կազմել էր 3 օր, 2018թ ամռանը՝ 4 օր և 2019թ ամռանը՝ 6 օր (464 օր / 103 գործուղում = 4.5 ≈ 5 օր):

Գրաֆիկ 3. Պետական գործուղումների կառուցվածքը, 2018թ հունիս-օգոստոս



2018թ ամռանն ամենից շատ գործուղած պաշտոնյաներն են՝

1. Արդարադատության նախարար **Արտակ Զեյնալյանը**՝ 22 օր,
2. Առաջին փոխվարչապետ **Արարատ Միրզոյանը**՝ 20 օր,
3. Սփյուռքի նախարար **Մխիթար Հայրապետյանը**՝ 15 օր,
4. Արտակարգ իրավիճակների քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչության միջազգային համագործակցության առաջին բաժնի պետ **Աղվան Սարգսյանը**՝ 11 օր,
5. Կրթության և գիտության նախարարի տեղակալ **Արևիկ Անափիոսյանը**՝ 11 օր:

Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ

Այնուհետև, փորձել ենք պարզել, թե որ պետական կառույցներն են առավել երկար գործուղել: Ներկայացնում ենք 2019թ ամռանը ամենաերկար տևողությամբ գործուղած մարմինների ցանկը՝

1. **Արտակարգ Իրավիճակների նախարարություն՝** 66 օր կամ ընդամենը գործուղումների 14 %-ը,
2. **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝** 50 օր կամ 11%-ը,
3. **Էկոնոմիկայի նախարարություն՝** 29 օր կամ 6%-ը,
4. **Առողջապահության նախարարություն՝** 24 օր կամ 5%-ը,
5. **Վայոց Ձորի մարզպետարան՝** 20 օր կամ 4%-ը:

Վերը նշված կառույցների գործուղումների միասնական տևողությունը կազմում է ողջ գործուղումների 41%:

Գրաֆիկ 4. Պետական գործուղումների կառուցվածքը, օր / 2019թ հունիս-օգոստոս /



2018 թվականի ամռան ամիսներին ամենից երկար գործուղել են հետևյալ պետական կառույցները՝

1. **Արդարադատության նախարարություն՝** 60 օր, կամ ողջ պետական գործուղումների 18%-ը,
2. **Արտակարգ իրավիճակների նախարարություն՝** 25 օր կամ 8%,
3. **Առողջապահության նախարարություն՝** 22 օր կամ 7%,
4. **Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝** 18 օր կամ 5%,
5. **Մշակույթի նախարարություն՝** 18 օր կամ 5%:

Վերը նշված հինգ կառույցների գործուղումների տևողությունը ընդամենը գործուղումների կառուցվածքում ունի 43% կշիռ:

Գրաֆիկ 5. Պետական գործուղումների կառուցվածքը, օր / 2018թ հունիս-օգոստոս /



Ծառայողական գործուղումների հիմնական ուղղությունները

2019թ ամռան ամիսներին, համաձայն ՀՀ Էլեկտրոնային կառավարման հրապարակած տվյալների, գործուղելիս պետական մարմինները նախապտվությունը տվել են շրջագայել դեպի ԱՊՀ երկրներ՝ 150 օր գործուղումների հանրագումարային տևողությամբ, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն (77օր), Բելառուս (49օր), Ղրղզստան (10օր), Ղազախստան (7օր), Ուզբեկստան (4օր) և Տաջիկստան (3օր): 2018 թվականի նույն ժամանակահատվածում դեպի ԱՊՀ երկրներ գործուղումները եղել են մոտ 2 անգամ պակաս:

Դեպի ԵՄ երկրներ (Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Գերմանիա և այլն) իրականացրած գործուղումներն այս տարի նվազել են 38 օրով և կազմել են 88 օր: Նաև հաճախակի գործուղել են դեպի Վրաստան՝ 31 օր, Շվեյցարիա՝ 26 օր, Իրան՝ 17 օր, ԱՄՆ՝ 15 օր և այլն: Ավելացել են նաև նոր ուղղություններ, ինչպես օրինակ՝ Կորեան, Ղրղզստանը, Ճապոնիան, Լյուքսեմբուրգը, Սինգապուրը և այլն:

Գրաֆիկ 6. Գործուղումների խոշոր ուղղությունները 2018-2019թ հունիս, հուլիս, օգոստոս



Աղյուսակ 3. 2019թ ամառային զործուղումների թոփ 10 ուղղություններ

	Գործուղված երկիր	2019թ հունիս-օգոստոս, օր	2018թ հունիս-օգոստոս, օր	տարբերությունը
1	ՌԴ	77	41	+36
2	Բելառուս	49	20	+29
3	Վրաստան	31	26	+5
4	Բելգիա	27	18	+9
5	Շվեյցարիա	26	6	+20
6	Իրան	17	4	+13
7	ԱՄՆ	15	48	-33
8	Ֆրանսիա	15	46	-31
9	Կորեա	13	-	+13
10	Ղրղզստան	10	-	+10
	Ընդամենը	**464**	**331**	**+133**

Աղյուսակ 4. 2018թ ամառային զործուղումների թոփ 10 ուղղություններ

	Գործուղված երկիր	2019թ հունիս-օգոստոս, օր	2018թ հունիս-օգոստոս, օր	Տարբերությունը
1	ԱՄՆ	48	15	+33
2	Ֆրանսիա	46	15	+31
3	ՌԴ	41	77	-36
4	Վրաստան	26	31	-5
5	Ղազախստան	21	7	14
6	Բելառուս	20	49	-29
7	Իտալիա	20	9	11
8	Բելգիա	18	27	-9
9	Նիդեռլանդներ	12	-	12
10	Սիրիա	12	-	12
	Ընդամենը	**331**	**464**	**-133**

Ամփոփում

Ուսումնասիրելով նոր իշխանությունների վարքագիծը պաշտոնավարման սկզբի շրջանում և մեկ տարի անց, դուրս ենք բերել որոշակի միտումներ: 2019 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին ծառայողական գործուղումների և շրջագայություննեի թվաքանակն ավելացել է, ինչը նպաստել է ավիատոմսերին հատկացված ծախսի աճին: Գործուղման միջին տևողությունը երկարել է:

Այնուամենայնիվ, մեկ ավիատոմսի միջին գինը նվազել է, ինչը մասնավորապես կարելի է բացատրել բիզնես կարգի ավիատոմսերի փոխարինումով էկոնոմ կարգի ավիատոմսերով:

Ի տարբերություն 2018թ ամռան ամիսների գործուղումներին, կառույցների ցանկը գրեթե փոփոխություն չի կրել: Թե՛ նախկինում, թե՛ այժմ ամենախոշոր գործուղող մարմինն է Պաշտպանության նախարարությունը, որը 2019թ ամռանը ձեռք է բերել 604 ավիատոմս, ինչի համար ծախսվել է 102 միլիոն դրամ գումար: Նախագահի աշխատակազմը քառապատկել է գնված ավիատոմսերի թե՛ քանակը, թե՛ գումարը՝ 2019թ ամռանը ձեռք բերելով 29 ավիատոմս, ընդամենը 9 միլիոն դրամ արժողությամբ: Վարչապետի աշխատակազմը այս տարի ամռանը նույնպես ձեռք է բերել ավելի շատ ավիատոմսեր նախորդ տարվա համեմատ, սակայն ծախսել է 2 միլիոն դրամով ավելի քիչ գումար՝ 13 միլիոն դրամ:

2019թ ամռան հիմնական գործուղման ուղղություններն են ԱՊՀ երկրները (այդ թվում՝ Ռուսաստան, Բելառուս, Ղրղզստան), Եվրամիության անդամ պետություններ (այդ թվում՝ Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա), ինչպես նաև Վրաստան, Շվեյցարիա, ԱՄՆ և այլն: